

**ՄԻՔԱՅԵԼ ՍԱՐԻԲԵԿԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ  
(1935 – 2015)**



Հայաստանի Հանրապետության երկրաբանական գիտությունը և ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը ծանր կորուստ կրեց: 2015թ. մայիսի 11-ին երկարատև հիվանդությունից հետո իր մահկանացուն կնքեց Երկրաբանական գիտությունների ինստիտուտի օգտակար հանաձոների լաբորատորիայի ավագ գիտ. աշխատող, գիտությունների թեկնածու Միքայել Սարիբեկի Ազիզբեկյանը:

Մ. Ազիզբեկյանը ծնվել է 1935թ. օգոստոսի 26-ին, Թբիլիսի քաղաքում, ծառայողի ընտանիքում: Նա սովորել և ավարտել է Թբիլիսիի №26 հայկական դպրոցը: 1954թ. ընդունվում է Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, որը հաջողությամբ ավարտում է 1959թ.-ին, ստանալով երկրաբան-հետախույզի մասնագիտացում:

Համալսարանն ավարտելուց հետո Երկրաբանական վարչության Ալավերդու արշավախմբում ընդունվում է աշխատանքի որպես ինժեներ-երկրաբան-հետախույզ: 1976թ.-ին տեղափոխվում է ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Ալավերդու մասնաճյուղ՝ որպես ինժեներ-երկրաբան և 1976թ. ընտրվում է կրտսեր գիտ. Աշխատողի պաշտոնում: 1980թ.-ից մինչև կյանքի վերջը ավագ գիտ. Աշխատողի պաշտոնում Մ.Ազիզբեկյանն աշխատում է ԵԳԻ օգտակար հանաձոների լաբորատորիայում:

Աշխատանքի առաջին տարիներին նա մասնակցում է Ալավերդու, Շամլուղի և Ախթալայի հանքավայրերի հետախույզական աշխատանքներին, որի արդյունքն են 18 տպագիր և 22 ձեռագիր աշխատությունները: Ալավերդու հրաքարային հանքավայրի երկրաբանական կառուցվածքը և պղնձի հանքայնացման տեղաբաշխման օրինաչափությունները հանդիսանում են նրա թեկնածուական ատենախոսության հիմնախնդիրները, իսկ ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանում է 1975թ. մայիսին, Թբիլիսիի Վրաստանի ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում:

Մ.Ազիզբեկյանն ակտիվ մասնակցություն է ունեցել Սպիտակի երկրաշարժի գոտու 1:50000 մասշտաբի քարտեզի կազմման աշխատանքներին, որոնց արդյունքները ամփոփիչ հաշվետվության ձևով գտնվում են ՀՀ ԳԱԱ ԵԳԻ և Ռուսաստանի ԳԱ Երկրի ֆիզիկայի ինստիտուտի ֆոնդերում:

Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո Մ.Ազիզբեկյանը զբաղվում է Հյուսիսային Հայաստանի և մասնավորապես՝ Դեբեդ և Աղստն գետերի միջագետքի օգտակար հանաձոների հանքավայրերի առաջացման և տեղայնացման օրինաչափությունների պարզաբանման հարցերով: Հետազոտվում են այդ տարածքների երկրաբանական և

կառուցվածքային պայմանները, մագմատիզմը, հանքանյութերի միներալա-երկրաքիմիական, տեքստուրա-ստրուկտուրային առանձնահատկությունները և բաշխման օրինաչափությունները: Կարևոր են նրա ուսումնասիրությունները Ալավերդու խզումնային խախտման («Հյուսիսային լայնացում») գոտու սահմաններում հրաքարային հանքայնացման տեղայնացման դերի մասին, ինչպես նաև՝ աշխատանքները Բոլնիսի (Վրաստան), Չքնաղի, Ոսկեսարի պղինձ-մոլիբդենային և ոսկու հանքային շրջանների համեմատական ուսումնասիրությունների ոլորտում:

Մ.Ազիզբեկյանի ստացած գիտական արդյունքներն ամփոփված են նրա 40-ից ավելի գիտական հոդվածներում, ինչպես նաև «Ալավերդի-Շամլուղ-Ախթալա հանքային հանգույցը (հանքայնացման կանխատեսման գիտական հիմունքները և եղանակները)» համահեղինակային աշխատանքում:

Մ.Ազիզբեկյանը երկրաբանական գիտությանը նվիրված, աշխատասեր, միաժամանակ շատ համեստ, ընկերների և հարազատների շրջապատում մեծ հարգանք վայելող անձնավորություն էր: Նրա հիշատակը միշտ վառ կմնա հարազատների, գործընկերների և բոլոր ճանաչողների սրտերում:

**ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ  
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն**